ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

<< >> հոկտեմբերի 2010թ. N -Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՍԱՄՎԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ <<ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ>> ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը և ղեկավարվելով <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով `

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

<<Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն>> փակ բաժնետիրական ընկերության աշխատակից, էլեկտրական գնացքի մեքենավար Սամվել Պետրոսյանին շնորհել <<Երևանի պատվավոր քաղաքացի>> կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<< ՍԱՄՎԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ <<ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ>> ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության քաղաքացի Սամվել Պետրոսյանը ծնվել է 1956թ. ՀՀ Արթիկի շրջանի մեծ Մանթաշ գյուղում:

Կրթությունը՝ միջնակարգ: 1980թ. դեկտեմբերին ավարտել է Թբիլիսիի երկաթգծի մետրոպոլիտենի դպրոցը և անցել է աշխատանքի Երևանի մետրոպոլիտենում որպես էլ. գնացքի մեքենավար:

Ս. Պետրոսյանը մինչ օրս՝ շուրջ 30 տարի, աշխատում է <<Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն>> փակ բաժնետիրական ընկերությունում իր մասնագիտությամբ: Աշխատանքի ընթացքում իրեն դրսևորել է որպես իր գործի հմուտ մասնագետ:

Երկարամյա ազնիվ և անբասիր աշխատանքի ու իր մարդկային բարձր հատկանիշների շնորհիվ Ս. Պետրոսյանը մեծ հարգանք և սեր է վայելում մետրոպոլիտենում:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

<< ՍԱՄՎԵԼ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ <<ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ>> ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու <<Սամվել Պետրոսյանին <<Երևանի պատվավոր քաղաքացի>> կոչում շնորհելու մասին>> որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման կամ այլ որոշումներում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ